Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
հուլիսի 4-ի N 790 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 17 -ի N 1018 -Ն որոշման

ԿԱՐԳ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑ ԹՈՂՆՎՈՂ ՋՐԻ՝ 170 ՄԼՆ Մ^3–Ը ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԻՆ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻՑ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՈՏ ՀԱՍՈՒՅԹԻ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ՇԱՀՈՒՅԹԻ) ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են 2017 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ 170 մլն մ^3–ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ հասույթի և կատարված ծախսերի տարբերությունից առաջացող շահույթի (այսուհետ՝ լրացուցիչ շահույթ) հաշվարկման և վճարման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճից 2017 թվականի ընթացքում բաց թողնվող ջրի՝ 170 մլն մ^3–ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից՝

1) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ շահույթը ($Շ_{ՄԷԿ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Շ_{ՄԷԿ} = [(Է_{առլր}-Է_{առլրկող}) \times ՍԴ_{ՄԷԿ}] \times 0,80$$

որտեղ՝

$Է_{առկա}$-ն – «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2017 թվականի օգոստոսի 2-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտ/ժ):

$Է_{առկակող}$ – 2017 թվականի օգոստոսի 2-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության «Արգել» և «Արզնի» ՀԷԿ-երի կողմից կողային ջրերի հաշվին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտ/ժ):

$ՍԴ_{ՄԷԿ}$-ն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/կՎտ/ժ)՝ առանց ԱԱՀ-ի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ շահույթը ($Շ_{ՀԷՑ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$Շ_{ՀԷՑ}$= [($Է_{առկա}$-$Է_{առկակող}$) x ($ՍԴ_{Հդ-5}$ – $ՍԴ_{ՄԷԿ}$)] x 0,80,

որտեղ՝

$ՍԴ_{Հդ-5}$-ն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/կՎտ/ժ)՝ առանց ԱԱՀ-ի:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված $Է_{առկա}$ և $Է_{առկակող}$ մեծությունների վերաբերյալ տեղեկատվությունը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական

ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրում է «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը:

4. Սույն կարգի 2-րդ կետի համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններում հաշվարկված լրացուցիչ շահույթը վճարվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից բացված արտաբյուջետային հաշվին: »:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ